տանում է քրէական դատարան (Բիդայէթի Ջինայէթ), որտեղ նորից մի ղադի ևս գտնում (այդ ատեաններում ղադի չկայ. շէյխ-իւլ-իսլամի դատը փնտրեցէք ղադիներին) և 5—6 կոկիկ հագնուած անդամների հետ նստեցնում կաշու գործարանատիրոջ և բանւոր պարսկի դատը քննելու համար։ Գուցէ հեղինակը կարծում է, որ ճակատ կտրելը փոքր յանցանք և թեը գործարանի անիւի տակը թողնել տալը մեծ յանցանք է. բայց քրէական յանցանքը քրէական է մնում, հետևապէս քաղաքացիական դատարան չի մտնիլ։

Պատկերի մէջ դուրս են բերւած Բոսֆորի Հիսար Բուրնիի արուարձանում թ ի ւ ր ք, խ ո լ ա մ գ ո ր ծ ա ր ա ն ա տ է ր և պ ա ր ս ի կ է լ մ ե ք ե ն ա վ ա ր։ Մեզ թւում է սակայն որ այդ բանը երևակայական է։

«Արդար դատաստան» պատկերով, ինչպէս երևում է, հեղինակը աշխատել է մեզ ծանօթացնել Կ. Պոլսի դատարանների հետ. բայց այդ երևակայական պատկերով ստուեր է գցել իւր միւս պատկերների վրայ՝ որոնք, ինչպէս վերն էլ ասացինք, իրական կեանքին բաւական մօտ են,

Ս. Մ.

---

# Նոր ստացւած գրքեր

---

1) ՍՊԵՆՍԵՐ, Հերբերտ—«Դաստիարակութիւն մտաւոր, բարոյական և ֆիզիքական»։ Թարգմ. Մկրտ. Ղազարեանց։ Հրատ. Թիֆլիսի Հրատարակչ. Ընկ.։ Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 1 ռուբլի։

2) ՇՄԻԴՏ, Օ. Ի.—«Մըռռան»։ Թարգմ. ռուսերէնից Անուշ. Քալանթար։ Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ., Թիֆլիս, տպար. Արօր Տ. Նազարեան. գինն է 20 կոպէկ։

3) ՍԷՑԼԱՆ, Ն.—«Խան Միրան» (աւանդական պատկեր Թահմազշահի Վասպուրականի արշաւանքից)։ Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Արօր Տ. Նազարեանի, 1892 թ., գինն է 20 կոպէկ։

4) ԳՈԳՈԼ, Ն.—«Տարաս Բուլբա»։ Թարգմ. Մ. Աբեղեան։ Հրատ. Թիֆլ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 40 կոպ.։

5) ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ.—«Երկու քոյր»։ Երկրորդ տպագր. Հրատ. Թիֆ. Հր. Ընկ., Թիֆլիս, տպ. Շարաձէ, 1892 թ., գինն է 25 կոպէկ։

6) ՇԻՐԱԿԵՑԻ.—«Մարօ», պատկեր իրական կեանքից։ Բ. Ալեքսանդրապոլ, տպ. Գ. Սանոյեանցի, 1892 թ., գինն է 5 կոպէկ։

7) ՍԵՆԿԵՒԻՉ, Հ.—«Փարոսի վերայ», թարգմանութիւն ռուսերէնից։ Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանցի, 1892 թ., գինն է 10 կոպէկ։

8) ՍԱՀԱԿԵԱՆՑ, Սահակ քահան.—«Դաստառակ կրօնի» Ա. տարի. Թիֆլ. տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 15 կոպէկ.

9) ՍԱՀԱԿԵԱՆՑ, Սահակ քահան.—«Դաստառակ կրօնի» Բ. տարի. Թիֆլ., տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.

10) ՍԱՀԱԿԵԱՆՑ, Սահակ քահան.—«Դաստառակ կրօնի» Գ. տարի. Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանի, 1892 թ., գինն է 20 կոպէկ.

11) ՋԱՄԱԼԻ.—«Երգիչ Ջամալու քնարական երգերը». Ալէքսանդրապոլ, տպ. Արր. Մալխասեանցի. 1892 թ., գինն է 20 կոպէկ.

12) «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ», հրատարակիչ Յովհաննէս Բարխուդարեանց. Գիրք Ա., Մոսկւա, 1892 թ..

13) ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ստ.—«Գրաբարի համաձայնութիւնը». Հրատ. Կենդր. Գրավաճառանոցի. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 50 կոպէկ.

14) ЕРИЦОВЪ, А.—„Исторія холерныхъ эпидемій въ Закавказьи". Եւ դորա հետ կից՝ „Чума въ Закавказьи". Тифлисъ, 1892 г. գինն է?

15) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.—«Դրախտի ընտանիք». 2-րդ տպագրութիւն. Հրատ. Թիֆլիսի Հ. Հրատ. Ընկ., տպ. Մ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 60 կոպէկ.

16) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ.—«Սիրաք և Սամուէլ». Բարի հօր կրթական դասեր ի նուէր հայոց հարց և զարգացեալ որդւոց. 3-րդ տպագրութիւն. Հր. Թիֆ. Հ. Հրատ. Ընկ. Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանցի, 1892 թ., գինն է 50 կոպէկ.

17) TER-MIKELIAN, Arschak, Dr.—„Die armenische Kirche in ihren Beziehnugen zur byzantinischen" (von IV. bis zum XIII. Jahrhundert). Leipzig, Gustav Fock, 1892 թ., գինն է 2 մարկ.

18) ՔԱՄԱԼԵԱՆՑ, Ս.—«Հեքիաթներ». Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ.,·գինն է 30 կոպէկ.